# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N2087 - Ա** **06 ապրիլի 2009թ.**

ԶՈՀՐԱՊԻ ՓՈՂՈՑԻ Հ.44/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՎԱՐԴ ԱՐԵՍՏԱԿԵՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ, ԱՐԱԻԿ ԷԴՎԱՐԴԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ԷԴՎԱՐԴԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ, ԱԼՎԱՐԴ ԷԴՎԱՐԴԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Էդվարդ Արեստակեսի Համբարձումյանի (ծնված 10.07.1935թ.), Արաիկ Էդվարդի Համբարձումյանի (ծնված 16.12.1965թ.), Սամվել Էդվարդի Համբարձումյանի (ծնված 18.03.1960թ.), Ալվարդ Էդվարդի Համբարձումյանի (ծնված 11.04.1961թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Զոհրապի փողոցի հ.44/1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 442.95քմ, որից 300քմ մակերեսով հողամասն էդվարդ Արեստակեսի Համբարձումյանին, Արաիկ Էդվարդի Համբարձումյանին, Սամվել Էդվարդի Համբարձումյանին, Ալվարդ Էդվարդի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 142.95քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1960 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշեն տարածքային ստորաբաժանման 27.01.2009թ. հ.355, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 30.03.2009թ. հ.20/2-Ե/163 գրությունները, 24.02.2006թ. ժառանգության իրավունքի վկայագիր, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 05.03.2009թ. հ.20-Ել-1546 եզրակացությունը, համաձայն որի Զոհրապի փողոցի հ.44/1 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Զոհրապի փողոցի հ.44/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Էդվարդ Արեստակեսի Համբարձումյանի, Արաիկ Էդվարդի Համբարձումյանի, Սամվել Էդվարդի Համբարձումյանի,Ալվարդ Էդվարդի Համբարձումյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300քմ մակերեսով հողամասին կից 142.95քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 142.95քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշեն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Գ.Զոհրապի փողոցի հ.44 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Վ Զոհրապի փողոցի հ.44/1 տուն>>։

5.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշեն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Էդվարդ Արեստակեսի Համբարձումյանի, Արաիկ Էդվարդի Համբարձումյանի, Սամվել Էդվարդի Համբարձումյանի,Ալվարդ Էդվարդի Համբարձումյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Աջափնյակ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա.Սարգսյանի վրա։

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**